Արձանագրություն N 3
ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 մայիսի 2026թ. 14 [30]

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա.Հովհաննիսյանը
անդամներ՝ Գ.Ավետիսյանը, Լ.Սարգսյանը
քարտուղար՝ Ս.Մկրտչյանը

I. Պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին

(Ա.Հովհաննիսյան)

1.1 Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 31 հոդվածի 12-րդ կետի՝ «ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը»:

1.2. Սահմանված կարգի համաձայն հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով 21.05.2026թ. 96/12-443 գրությամբ ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

1.3. Ընտրված Մասնակից ՍԱՔԱՆ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագիրը, պայմանագրի և որակի ապահովումները, սակայն 27.05.26թ. իր կողմից ներկայացվել է տեղեկանք, որով հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Սահմանված կարգի պահանջներին համապատասխան ՍԱՔԱՆ ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝
ա/ ՍԱՔԱՆ ՍՊԸ-ի փաստաթղթերն ուղարկել լիազոր մարմնին հետագա համապատասխան ընթացակարգ իրականացման համար:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ա.Հովհաննիսյան)

2.1 Հաջորդաբար ընտրված մասնակց է ճանաչվում «Դամկար» ՍՊԸ-ն:
2.2 Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա.Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Գ.Ավետիսյան

_____ Լ.Սարգսյան

քարտուղար՝ _____ Ս.Մկրտչյան